

**ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի
շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ (07.03.2018)**

Միրելի տիկնայք, մայրեր, քույրեր, դուստրեր, Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Կանանց տոնի առթիվ: Գարնան գալուստը լուսավորող այս հաճելի տոնը ևս մեկ առիթ է մեր երախտագիտությունն ու սերը հայտնելու ձեզ՝ ձեր նվիրումի ու հոգատարության, կյանքին ջերմություն ու բարություն հաղորդող անփոխարինելի ներկայության համար:

Մեր իրականության մեջ միշտ բարձր է դասվել հայ կնոջ կերպարը, որը զուգորդվել է արժանապատիվ առաքինության, անհատնում համբերության, անսպառ լավատեսության, դժվարություններին դիմակայելու անբացատրելի կարողության, ընտանիքին անմնացորդ նվիրվելու ամենավեհ դրսևորումների հետ:

Դրա շնորհիվ է, որ դարեր շարունակ պահպանվել են մեր ազգային լավագույն ավանդույթները, ստեղծած արժեքների հարատևությունն ու հայ ընտանիքի ամրությունը, որոնք առողջ հոգով և մտքով սերունդ դաստիարակելու և մեր տեղն աշխարհում ամրագրելու լավագույն հիմքն են հանդիսացել:

Թանկագին կանայք, Կրկին շնորհավորելով ձեզ այս գեղեցիկ տոնի առթիվ՝ ցանկանում եմ, որ այս օրը լցնող տոնական տրամադրությունն ուղեկցի ձեզ ամենուր, նոր շունչ ու գույն հաղորդի ձեր կյանքին: Թող ձեր ընտանիքներում, ձեզ շրջապատող իրականությունում գերիշխի սերը, երջանկությունն ու բարությունը:

Լավագույն ցանկություններով՝ Ա. Ս. Ղահրամանյան